

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

17.05. 2013թ.

գ. Սարատակ

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 190-Ա հրամանի և ի կատարումն ՀՀ Շիրակի մարզպետի 2013 թվականի ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակի համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 29 կարգադրության, աշխատանքային խումբը մասնակցությամբ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի պետ Ռուբեն Հարությունյանի /խմբի ղեկավար/, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի /խմբի անդամ/, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի /խմբի անդամ/, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի /մարզային հողային պետական տեսչության/ գլխավոր մասնագետ Արտյոմ Սարգսյանի /խմբի անդամ/, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ Հայկ Սարգսյանի /խմբի անդամ/, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի առաջատար մասնագետ Նաիրա Մարտիրոսյանի /խմբի անդամ/, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ Արմեն Հարությունյանի /խմբի անդամ/, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի Սարատակի գյուղական համայնքի ղեկավար Միշա Ղրզոյանի, Սարատակի համայնքում իրականացրել է վարչական հսկողություն՝ 2010 թվականի ապրիլի 1-ից մինչև 2013 թվականի ապրիլի 1-ն ընկած ժամանակաշրջանի համար:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Վարչական հսկողությունը սկսվել է 2013 թվականի ապրիլի 25-ին և ավարտվել՝ 2013 թվականի մայիսի 10-ին, արդյունքում պարզվել է հետևյալը՝

- 1) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ համայնքի նորընտիր ավագանին ընդունել է իր կանոնակարգը /2012 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 10-Ն/:
- 2) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթների՝ համայնքի ավագանին հաստատել է համայնքի 2009-2012թթ.զարգացման ծրագիրը /2009 թվականի հունվարի 15-ի արձ. թիվ 1/: